8159

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«12» 05 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0081-23

Ձեռնարկողը՝ ***«Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» ՍՊԸ***
Մասիս համայնք, Հ. Վարդանյան 10

Գործունեությունը՝ ***Ծխախոտի արտադրության գործարանի վերազինման և շահագործման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Արարատի մարզ, Մասիս համայնք

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝ / Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 էջ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0081-23

«12» Դեկտեմբեր 2023թ.

Ծխախոտի արտադրության գործարանի վերազինման և շահագործման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Գործունեության կատեգորիա՝	«Բ»
Տեղադրման վայրը՝	Արարատի մարզ, Մասիս համայնք

Ներածական մաս. Համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության /այսուհետ՝ հաշվետվություն/ «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» ՍՊ ընկերությունը նախատեսում է գոյություն ունեցող ծխախոտի արտադրության գործարանի վերազինում:

Գործունեության տարածքը գտնվում է Արարատի մարզի Մասիս քաղաքի վերջնամասում՝ արդյունաբերական գոտում, «ՄԱՍԻՍ ՏՈԲԱԿՈ» ՍՊԸ-ի, «Գրանդ Մաստեր» ՍՊԸ-ի և ջերմոցային տնտեսության հարևանությամբ: Մոտակայքում բնակելի տները, նախադպրոցական, դպրոցական, կազմակերպությունները, հիվանդանոցները, անտառային, գյուղատնտեսական մշակահողերը բացակայում են:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի, 5-րդ մասի, 8-րդ կետի բ) ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Ընկերությանը պատկանող տարածքի մակերեսը, համաձայն 03-003-0296-0154 կադաստրային ծածկագրով N 27022019-03-0063 սեփականության վկայականի, կազմում է 4.347 հա: Հողատարածքի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության է, գործառնական նշանակաությունը կամ հողատեսքը՝ արդյունաբերական օբյեկտների, գրանցված իրավունքի տեսակը՝ վարձակալություն:

Մասիս քաղաքի տարածքը գեոմորֆոլոգիական տեսակետից ունի հարթ ռելիեֆային բնույթ: Տարածքը ալյուվիալ պրոլյուվիալ ակումուլյատիվ հարթավայր է, մակերևույթի թեքությունը չի գերազանցում 10%:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է տաք կլիմայական գոտում, ամռանը՝ շոգ, չոր, միջին ջերմաստիճանը հուլիսին՝ 21^{0}C, հարաբերական խոնավությունը

72% ցածր: Ձմեռ՝ ցուրտ, անհողմ, միջին ջերմաստիճանը հունվարին -4°C, բացարձակ խոնավությունը 8.2մբ, քամու միջին արագությունը՝ 0.3-0.5 մ/վ:

Թութունի վերամշակման սանիտարապաշտպանիչ գոտու չափն ըստ CH245-71 ստանդարտի՝ սահմանված է 50մ /V դաս/, ինչը համաձայն հաշվետվության ապահովված է:

Ձեռնարկության վերազինման արդյունքում նախատեսվում է ժամային արտադրողականության ավելացում, սակայն տարեկան արտադրողականությունը մնալու է անփոփոխ:

Ձեռնարկության առավելագույն տարեկան արտադրողականությունը կազմում է 20 մլրդ. սիգարետ, 200 000 սիգար, 4000 կգ շիշա:

Գործարանը բաղկացած է ծխախոտի կտրտման, սիգարետի, սիգարի, շիշայի, եզրաթղթի մշակման արտադրամասերից:

Ծխախոտի կտրտման արտադրամասում առկա սարքավորումների միջոցով ծխախոտի հումքը վերամշակվում և տեղափոխվում է սիգարետի արտադրամաս: Սիգարետի արտադրամասում հաստոցների միջոցով փաթաթվում է սիգարետ և պահեստավորվում: Նարգիլեի ծխախոտի արտադրամասում հումքից ձեռքով պատրաստվում է ծխախոտը և փաթեթավորվում հաստոցի միջոցով:

Ընկերությունում նախատեսվում է ներդնել նոր սերնդի PROTOS ծխախոտ արտադրող հոսքագիծ զինված ժամանակակից տեխնոլոգիաներով և համաշխարհային չափանիշների առաջադեմ տեխնոլոգիայով: Ծխախոտի գլանակ արտադրող հոսքագիծը լիցքավորվելու է անհրաժեշտ նյութերով (ծխախոտ, ֆիլտր, թուղթ և այլն), որից հետո ծխախոտը ձևավորվելու է երկար ձողով՝ համապատասխան դանակները կտրտելու են ծխախոտն անհրաժեշտ երկարությամբ: Այնուհետև ֆիլտրն ամրացվում է և փաթաթվում թղթով, որպեսզի ձևավորվի «կրկնակի ծխախոտ» կապված ֆիլտրի հետ, որն այնուհետև կիսվում է: Հատուկ լազերները ֆիլտրի հատվածում ստեղծում են պերֆորացիաների անհրաժեշտ շարք, իսկ ծխախոտի վերականգնման հանգույցն ապահովում են ծխախոտի թանկարժեք հումքի առավելագույն օգտագործումը:

Գործարանում առկա սիգարետի արտադրամասերում առկա են օդակարգավորման համակարգեր, որոնք բաղկացած են Clint և Carrier ապրանքանիշի սառեցնող չիլերներից և օդափոխության համակարգից:

Գործունեության ընթացքում մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերը հիմնականում արտանետվում են՝ թութունի երկրորդային վերամշակման արտադրամասից N 1, 2, 3 կաթսայատներից:

Թութունի երկրորդային վերամշակման արտադրամասում տեղադրված է փակ համակարգով թութունի երկրորդային վերամշակման հոսքագիծ: Հոսքագիծը համալրված է երկաստիճան փոշեորսիչ սարքավորումներով՝ ցիկլոնով, որոնց միջոցով արտանետումները որսվում են 92%: Նշված գործընթացից արտանետվում են կախված մասնիկներ (թութունի փոշի), որի տարեկան քանակները կազմում են՝ կախված մասնիկներ՝ 0.097գ/վրկ կամ 2.5տ/տարի:

Համաձայն հաշվետվության ծխախոտի արտադրամասում արտանետումները բացակայում են, քանի որ մշակված թութունը, որը ունի որոշակի խոնավություն՝ տրվում է ծխախոտի պատրաստման հոսքագիծ: Ըստ ծխախոտի արտադրության տեխնոլոգիայի արտադրամասում տեղադրված են սարքավորումներ, որոնք արտադրական տարածքներում ապահովում են խոնավության ցուցանիշները:

N 1 կաթսայատանը տեղադրված են 2 կաթսա, որոնք նախատեսված են արտադրական գործընթացին գոլորշի մատակարարելու համար: Հիմնական վառելիքը

բնական գազն է, գազի միջին տարեկան ծախսը կազմում է 1500000մ^3, այլընտրանքային վառելիք չի նախատեսվում:

Համաձայն հաշվետվության արտանետվող նյութերի տարեկան քանակները կազմում են՝

Կաթսա N 1՝ ածխածնի օքսիդ – 0.254 գ/վրկ, 6.573 տ/տարի ազոտի օքսիդներ – 0.087 գ/վրկ, 2.247 տ/տարի:

Կաթսա N2՝ ածխածնի օքսիդ – 0.29 գ/վրկ, 7.512 տ/տարի ազոտի օքսիդներ – 0.1 գ/վրկ, 2.568 տ/տարի:

N 2 կաթսայատանը տեղադրված է 1 կաթսա, որը նախատեսված է ջեռուցման և արտադրական գործընթացին գոլորշի մատակարարելու համար: Հիմնական վառելիքը վնասված փայտե տակդիրներն են: Կաթսայատունը աշխատացվում է բացառապես միայն ջեռուցման սեզոնի ընթացքում: Փայտի միջին տարեկան ծախսը – 2000մ/տարի է: Կաթսայում փայտի այրման արդյունքում առաջացած վնասակար նյութերն են՝ մոխիրը, ածխածնի օքսիդը, ազոտի օքսիդները:

N 3 կաթսայատանը տեղադրված են 3 կաթսա, որոնք նախատեսված են արտադրական գործընթացին գոլորշի մատակարարելու համար: Հիմնական վառելիքը բնական գազն է, գազի միջին տարեկան ծախսը կազմում է 800000մ^3, այլընտրանքային վառելիք չի նախատեսվում: Գազի այրման ժամանակ առաջացած վնասակար նյութերն են՝ ածխածնի օքսիդը և ազոտի օքսիդները: 3 գազի կաթսաները միացված են մեկ ծխատար խողովակին: Կաթսա N3՝ արտանետվող նյութերի տարեկան քանակները կազմում են՝ կախված մասնիկներ /մոխիր/՝ 0.232 գ/վրկ, 6.0 տ/տարի, ածխածնի օքսիդ – 0.787 գ/վրկ, 20.4 տ/տարի ազոտի օքսիդներ – 0.077 գ/վրկ, 2.0 տ/տարի:

Կաթսա N 4, 5, 6՝ արտանետվող նյութերի տարեկան քանակները կազմում են՝ ածխածնի օքսիդ – 0.29 գ/վրկ, 7.512 տ/տարի ազոտի օքսիդներ – 0.1 գ/վրկ, 2.568 տ/տարի:

Կաթսաները ապահոված են այրիչներով և այրման ռեժիմի ավտոմատ կարգավորիչներով, ինչպես նաև անվտանգությունն ապահովող անհրաժեշտ սարքավորումներով, վթարային անջատիչներով, ձայնային և լուսային ազդանշաններով: Ընդհանուր գազի տարեկան միջին ծախսը կազմում է 2 300 000 մ^3/տարի (պահեստային վառելիք նախատեսված չէ):

Համաձայն հաշվետվության թութունի երկրորդային վերամշակման գործընթացը կատարվում է գոլորշու միջոցով, խոնավ միջավայրում և ապահոված է երկաստիճան փոշեորսիչ սարքավորումներով՝ ցիկլոններով: Ուստի տեխնոլոգիական և փոշեգազամաքրման սարքավորումների արդիականության և տվյալ արտադրության լավագույն հասանելի տեխնոլոգիաների կիրառում արտադրության և կաթսաների համար չի նախատեսվում:

Համաձայն հաշվետվության՝ արտանետումների ազդեցությունը մթնոլորտային օդում գնահատելու նպատակով կատարվել են «ԷՌԱ» ծրագրով ցրման հաշվարկներ, որոնց արդյունքները համեմատվել են գոյություն ունեցող սանիտարական թույլատրելի նորմերի հետ: Համաձայն ծրագրի՝ գետնամերձ հաշվարկային կոնցենտրացիաները, ներառյալ գումարային ազդեցությունը, ՍԹԿ մասով կազմում են.

№	Աղտոտող նյութեր	ՍԹԿ առավելագույն միանվագ, մգ/մ^3	Առավելագույն գետնամերձ կոնցենտրացիաները (ֆոնի հետ)	
			մգ/մ^3	ՍԹԿ մասով

1	Ազոտի երկօքսիդ	0.2	0.0356069	0.1780347
2	Ածխածնի օքսիդ	5	0.4851663	0.0970333
3	Կախյալ մասնիկներ	0. 5	0.0804327	0.1608654

Համաձայն մթնոլորտում վնասակար նյութերի ցրման հաշվարկների արդյունքերի՝ սպասվելիք գետնամերձ կոնցենտրացիաները գտնվում են բնակելի գոտիների համար սահմանված նորմերում:

Գործունեության իրականացման հետևանքով՝ մթնոլորտի վրա հնարավոր ազդեցության տնտեսական վնասը կազմում է 667138 դրամ/տարի:

Տարածքն ապահովված է ջրամատակարարման, ջրահեռացման և էլեկտրամատակարարման համակարգերով: Գազամատակարարումն իրականացվելու է ըստ տրված տեխնիկական պայմանի: Գործունեության իրականացման աշխատանքային օրերի թիվը կազմելու է 260 օր/տարի, երկու հերթափոխով 8 ժամ/օր:

Ձեռնարկությունում ջուրն օգտագործվում է տեխնոլոգիական, կոմունալ-կենցաղային և սանիտարական կարիքների համար: Արտադրական տարածքի մոտակայքում ջրային ռեսուրսները բացակայում են: Ձեռնարկությունում առաջացած տնտեսակենցաղային և արտադրական կեղտաջրերն ուղղվում են Մասիս քաղաքի կոյուղու կոլեկտոր:

Գործունեության ընթացքում առաջանում են արտադրական և կենցաղային թափոններ, այդ թվում՝ բանեցված սնդիկային լամպեր, բանեցված կապարե կուտակիչներ և խոտան, իրենց սպառողական հատկությունները կորցրած ավտոմոբիլային յուղերի մնացորդներ, թութունի փոշի, կենցաղային աղբ, բանեցված օդաճնշիչ դողեր, տարատեսակ փայտի փոշի, փայտանյութի մոխիր և այլն՝ 171.65տ/տարի քանակությամբ: Ձեռնարկության վերազինման արդյունքում թափոնների քանակը մնալու է անփոփոխ:

Փոփոխման ենթակա գործող հոսքագիծն ապամոնտաժվելու և պահպանվելու է ընկերության պահեստային տարածքներից մեկում:

Ընկերությունում առաջացող թափոնատեսակները հանձնվելու են Հանրապետությունում գոյություն ունեցող համապատասխան թափոնների վերամշակման ընկերություններին:

Համաձայն հաշվետվության ընկերության տարածքում առկա են կանաչապատ և ծառածածկ գոտիներ: Ընկերության արտադրամասերը կահավորված են աշխատողների կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու անհրաժեշտ բոլոր պարագաներով, մասնավորապես՝ հանդերձարաններ, ցնցուղարաններ, զուգարաններ և հանգստի սենյակներ:

Համաձայն հաշվետվության գործունեության իրականացման ընթացքում լինելու են ազդեցություններ՝ կապված բնական աղետների, աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ռիսկերի առաջացման հետ:

Հաշվետվությունում նախատեսվում է օդային ավազանն աղտոտումից պահպանման, թափոնների կառավարման, սոցիալական, արտակարգ իրավիճակների ռիսկերի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ և մոնիթորինգ (մշտադիտարկում).

- պարբերաբար իրականացնել երկաստիճան փոշեորսիչ ցիկլոնների պրոֆիլակտիկ ստուգում և տեստավորում,
- սարքավորումների սպասարկումը և շահագործումն իրականացնել միայն հատուկ պատրաստված անձնակազմի կողմից,
- իրականացնել օդային ավազանի մոնիթորինգ՝ ածխածնի օքսիդի և ազոտի օքսիդների գերնորմատիվային արտանետումները կանխելու նպատակով,
- ապահովել կաթսաների այրման ռեժիմը և անհրաժեշտ ջերմաստիճանը

գերնորմատիվային արտանետումները կանխելու նպատակով,

- երեք ամիսը մեկ, աշխատակիցների հետ անցկացնել հրահանգավորում անվտանգության տեխնիկայի գծով,
- տրանսպորտային մեքենաների և արտադրական սարքավորումների ղեկավարումը թույլատրել այն անձանց, որոնք անցել են հատուկ ուսուցում և ունեն այդ մեքենաների կամ սարքավորումների:ղեկավարման իրավունքի վկայական,
- բնական աղետների ժամանակ (երկրաշարժ, սողանքներ, ջրհեղեղ և այլն) ընկերության արտադրական աշխատանքը կանգնեցվելու են և անձնակազմը տեղափոխվելու է անվտանգ վայր,
- հրդեհի ժամանակ հոսանքազրկվելու են բոլոր էլեկտրական սարքերը, միացվելու է հակահրդեհային ջրի համակարգը, անձնակազմը տեղափոխվելու է անվտանգ վայր,
- չոր և շոգ եղանակներին բաց հրապարակներում և մերձակա ճանապարհներին կատարվելու է ջրցանում՝ փոշենստեցման նպատակով:
- հարակից տարածքները չեն խախտվելու և չեն աղտոտվելու կենցաղայի աղբով և այլ տեսակի թափոններով և այլն:

Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի իրականացման համար նախատեսվող ծախսերը կազմում են 350 հազար դրամ:

Պատճառաբանական մաս. նախատեսվող գործունեությունը կատարվելու է արտադրական տարածքում, որը գտնվում է երկարամյա մարդածին ազդեցության ներքո: Համաձայն հաշվետվության՝ ծխախոտի արտադրության գործարանի վերազինման և շահագործման հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի վրա լինելու է թույլատրելի նորմերի սահմաններում:

Հաշվետվության փորձաքննական գործընթացին մասնակցել են համապատասխան մասնագիտական կառույցները՝ առողջապահության, արտակարգ իրավիճակների նախարարությունները, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Փորձաքննական գործընթացում գնահատման հաշվետվությունն առաջարկություններով և դիտողություններով լրամշակվել է: Օրենսդրությամբ սահմանված կարգով փորձաքննության բոլոր փուլերում Արարատի մարզի Մասիսի համայնքապետարանում իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել:

Փորձաքննական պահանջներ

- Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել հաշվետվությամբ նախատեսված մշտադիտարկման (մոնիթորինգ) և բնապահպանական միջոցառումների կատարումը, կազմել հետնախագծային վերլուծության ծրագիրը, ինչը համապատասխան պահանջի դեպքում պետք է տրամադրվի պետական մարմիններին և հանրությանը:
- Հաշվետվությունում նախատեսված բնապահպանական միջոցառումների չբավարարման դեպքում, նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական բոլոր նորմերը:
- Պահպանել հաշվետվությամբ ամրագրված տեխնիկա-տեխնոլոգիական լուծումները, ցուցանիշները և նորմերը:
- Բացառել բաց տարածքում թափոնների կուտակումը և պահպանումը:

- Պահպանել բնապահպանական, աշխատանքի անվտանգության նորմերը, ելնելով ՀՀ աշխատանքային օրենսգրքով (հոդված՝ 243, 244) ամրագրված՝ մարդու առողջության և անվտանգության պահանջից:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծխախոտի արտադրության գործարանի վերազինման և շահագործման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Արմինե Վարդանյան